

աղօթք և օրհնութիւն ձեր անպակաս լիցի ի վերայ մեր. և խնդրեմ ի յապենիազ բարեբարէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ զքեզ ընդ երկայն աւուրս պահեսցէ իբրև զջահ անշիջանելի բազմահոյլ եղբարքք՝ ի պարծանս համայն հայկական տոհմի և ի պայծառութիւն սուրբ դամբարանի և աշակերտելոց մանկանց սուրբ եկեղեցոյ: Այսքանս բաւեսցի. առ այս ողջ լե՛ր, ողջագուրեալդ ի Հոգւոյն Արքոյ: Ծրեցաք ի զընտանի միջի յունուար ԻՆ. օրի: Ղազար ծառայ քո երկրրպազէ զգարչապարս քո զերկոսին. ծառայ քո եմ ես՝ ծառայ և որդի աղախնոյ քո, արա՛ զիս իբրև զմի ի վարձկանաց քոց. ամէն, ամէն. եղիցի, եղիցի: Դարձեալ մեր հոգեւոր հօր Տէր Բարդամին մահտեւոյ և խօճա Մուրատ եղբօր մերոյ ողջոյն մատուցանեմք. Ստեփաննոսի և Սարգիս պապայիս և այլ եղբարց ամենեցուն ծառայ եմք:

Հրատարակեց՝ Մ. Ն. Ն.

“ՄԱՅՐ ՑԱՒԱԳԻՆ,,

Տառապանքիդ առջեւ անգոր՝  
 Խոնարհօրէն եւ մեմաւօր,  
 Քե՛զ կ'աղօթեմ արթիս խորէն,  
 Ո՛վ երկնաւա՛մ Մայր լուսեղէն:

Դու, զբրաւաս Մայր Թագուհի,  
 Որդեկորոյս Ասուածուհի,  
 Ճանչցար վիճքս այլ տկայիւր  
 Եւ հեղուրեամբ զայն կրեցիր:

Չարչարանքին հանդէպ Որդւոյ՝  
 Լըռեցուցիր լաւերն հոգւոյդ,  
 Եւ անգանգաս՝ խաչին տփին՝  
 Հաւանեցար Տիրոջ կամին:

Մահը գրկած բեւեռուդ մեջ՝  
 Բորբոնեցիր սիրոյ անեղջ  
 Ասրուածան՝ Բու մայրական  
 Կուրծիդ նեքեւ անյեղական:

Դու, Մայր բարեաց, մեզ ցոյց տրիր  
 Կենաց ուղին ուր անբասիր  
 Պե՛տք է կայենք, միտք անսրտուջ  
 Եւ հաւես՝ մինչեւ մեր վերջին տունջ:

Մարտ 1932, Գանձիկի Մե՛ղ, Բիկ

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԻՔ ՀՕՐ  
Ճ Ա Ռ Ը

Իր նախագահութեամբ առաջին անգամ գումարուած Միաբանական Ընդհ. Ժողովոյ մէջ:

Գերաշնորհ, Հոգեշնորհ և Բարեշնորհ

Միաբանակիցք իմ, եղբարք և Սերելիքք ի Քրիստոս:

Երեք ամիսներէ ի վեր ձեր մէջ եմ արդէն, ստանձնած՝ պարտականութեանց լուծը, զոր Պատ. Միաբանութիւնդ աւելի քան ութ ամիսներ կանուխ առաջարկած էր ինձ իր բարեհաճ ընտրութեամբը, յետ վախճանի ամէնուղ և իմ անմտտանալի և ամէնարժան չօր, որոյ և իր բոլոր երանաշնորհ նախորդաց յիշատակն օրհնեալ յախտեան:

Թոյլ տրուի ինձ, այս առթիւ, երբ առաջին անգամ կը նախագահեմ զիս ընտրող ժողովոյդ գումարմանը, անգամ մը ևս յայտնել զգածուած սրտիս շնորհակալութիւնը, իմ մասին յայտնուած վստահութեան համար:

Բարութեանց Տէրը շնորհէ՛ ամէնուղ և ինձ կեանք և հոգի բարի, կարենալու համար կատարել մեր պարտականութիւնքը և արգարացընել ազգին ակնկալութիւնները:

Եթէ զէթ տարի մը բոլորած լինէր արդէն պաշտօնի ձեռնարկելէս ի վեր, պիտի պարտականութիւն նկատէի և կարենայի իսկ կատարուած աշխատութեանց համարատուութիւն մը ներկայացնել այսօր այս Աթոռէն՝ ամէնուղ և Ազգին իսկ: Բայց եռամսեայ ժամանակամիջոց մը հազի՛ւ թէ պիտի բաւէր ճանչնալու և ըմբռնելու համար այսպիսի դարաւոր և բարդ Հաստատութեան մը կարիքները, և զանոնք գոհացնելու համար հարկաւոր եղած միջոցներն ու կարիքութիւնները: Հետեւաբար թո՛ղ ներուի ինձ՝ եթէ վստահակ հաշիւի, իմ պաշտօնիս՝ այսօրն ազգին այս նուիրական Տան վերաբերմամբ իմ պարտականութեանցս մասին իմ ըմբռնուած միայն կարող կ'ըլլամ յայտնել այժմ քանի մը բառերով:

Դիպուածաւ չէ որ Տուն կոչեցի այս դարաւոր յարկը. իմ համոզումս է արգարև թէ ա՛յդ է անոր ամենէն բնորոշ չ նկարագրիրը. դորձի կամ շահու հաղորդութեամբ հաւաքուած անկամներու ընկերակցութիւն չենք հոս, այլ նուիրումի ուխտով գոյաւորուած եղբայրութիւն մը, որ եկած է հոս ապրիլ և իրագործել հաւատքի և սիրոյ կեանքը:

Աստուծոյ վառքը և ազգին սէրը. այս զոյգ զգացումներուն մէջ է որ կը կայանայ այս Տան ոգին կամ նպատակը: Աստուածպաշտութիւն և